


ԱՐԱՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ (Ծննդյան 115-ամյակի առթիվ)*



Լրացավ նշանավոր բանագետ, գրականագետ, ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1967 թ.), «Պատվո նշանի» չքանչանակիր (1951 թ.) Արամ Տիգրանի Ղանալանյանի ծննդյան 115-ամյակը: Ա. Ղանալանյանն, ըստ էության, խորհրդային ժամանակաշրջանի գրեթե սկզբից մինչև վերջ գլխավորեց և ուղղորդեց Հայ բանաստեղծության վերաբերյալ ուսումնասիրությունները խորհրդային Հայաստանում, չարունակելով իր մեծ ուսուցիչ Մանուկ Աբեղյանի ավանդները՝ դարձավ բանագետների նոր սերնդի ուսուցիչն ու ոգեշնչողը:

Ա. Ղանալանյանը պատկանում է XX դ. այն հայագետների շարքին, որոնք, հասակ առնելով խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս՝ հարևան Վրաստանի հայաբնակ շրջաններում, և որպես անհատ սկզբնապես ձևավորվելով իրենց հայրենի բնակավայրում ու Վրաստանի մայրաքաղաքում, այնուհետև ընտանիքով կամ միայնակ տեղափոխվել են Հայաստանի մայրաքաղաք:

Ծնվել է 1909 թ. փետրվարի 12-ին՝ Ախալցխայում, դպրոց է գնացել ծննդավայրում՝ ավարտելով տեղի յոթնամյա դպրոցը, ապա ուսումը շարունակել է Թիֆլիսի թիվ 72 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1925-ին: Այնուհետև փոխադրվել է Երևան և 1927 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի լեզվագրական բաժին: Դեռ Ախալցխայում սովորելիս, ապա՝ ԵՊՀ-ում ուսանելիս՝ Ա. Ղանալանյանն «ազահորեն լսում ու գրի էր առնում այն ամենը, ինչ կապ ուներ ժողովրդական ստեղծագործության հետ» [Ս. Շտիկման. Համառ աշխատավորը (Արամ Ղանալանյանի ծննդյան 60-ամյակի առթիվ). – «Երեկոյան Երևան», 1969, № 36, էջ 4]:

ԵՊՀ-ում Ա. Ղանալանյանի դասախոսները հայագետների մի փայլուն փառանգ էին ներկայացնում բանագետ-գրականագետ, լեզվաբան Մանուկ Աբեղյան, համեմատական լեզվաբաններ Հրաչյա Աճառյան և Գրիգոր Ղափանցյան, գրականագետ Արսեն Տերտերյան և ուրիշներ: Արդեն չորրորդ

* Ներկայացվել է 21. V. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:

¹ 1924–1926 թթ. Ա. Ղանալանյանը բանաստեղծություններ է հրատարակել Թիֆլիսում հրատարակվող «Կարմիր ծիլեր» ամսագրում և «Մարտակոչ» թերթի հավելված «Գրական շաբաթ»-ում «Աղանի» և «Արամ Արման» ծածկանուններով:

կուրսում երիտասարդ Ղանալանյանը մասնագիտանում է բանահյուսության բնագավառում։ Մ. Աբեղյանի ցուցումներով առաջին քայլերն անելով բանագիտական ուսումնասիրությունների ոլորտում՝ կազմում է հայ բանահյուսության մանրամասն մատենագիտություն։ 1931 թ. ԵՊՀ պատմագրական ֆակուլտետն ավարտելուց հետո, Ա. Ղանալանյանը մի քանի տարի դասավանդել է Երևանի միջնակարգ դպրոցներում (1931–1933 թթ.)։ 1934–1951 թթ. «Հայ ժողովրդական բանահյուսություն» առարկան է դասախոսել Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և Հեռակա մանկավարժական ինստիտուտում (1936–1948 թթ.), իսկ 1937–1941 թթ. ԵՊՀ-ում։ 1943 թ. նրան շնորհվել է դոցենտի կոչում։

Համալսարանն ավարտելուց մեկ տարի անց՝ ուսուցչական աշխատանքին զուգահեռ, Ա. Ղանալանյանն իր դասախոս Յոլակ Խանզադյանի հանձնարարականով և նշանավոր բանագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանի օժանդակությամբ անցել է գիտահետազոտական աշխատանքի։ Այդպես, նախքան Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնումը, Ա. Ղանալանյանը 1932–1937 թթ. կրտսեր գիտաշխատող է եղել Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության, ապա՝ Պատմության և գրականության ինստիտուտներում։ Այնուհետև, երբ ստեղծել է Խորհրդային Միության Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը, Ա. Ղանալանյանն աշխատանքի է անցել Լեզվի և գրականության ինստիտուտում՝ որպես կրտսեր (1938–1939 թթ.), ապա՝ ավագ գիտաշխատող (1940–1943 թթ.), իսկ 1943-ին ստեղծված ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում նշանակվել է ժողովրդական բանահյուսության բաժնի (այն ժամանակ՝ սեկտորի) վարիչ՝ այդ պաշտոնում մնալով ավելի քան 16 տարի (1943–1960 թթ.)։ 1960 թ. մարտի 3-ին այս բաժինը տեղափոխվել է նորաբաց Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, սակայն Ա. Ղանալանյանը նախընտրել է մնալ Հարավարևելյան Հայաստանի ինստիտուտում, որտեղ և շարունակել է աշխատել որպես ավագ գիտաշխատող մինչև իր կյանքի վերջին օրերը։ XX դարակեսի բանագետների նոր սերնդի մի շարք ներկայացուցիչներ Ա. Ղանալանյանի գիտական աշակերտներն ու հետնորդներն էին (Սարգիս Հարությունյան, Արուսյակ Սահակյան և ուրիշներ)։

1965 թ. մարտին Ա. Ղանալանյանն ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1970 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1977 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս։ Ա. Ղանալանյանն իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է «Աբովյանը և ժողովրդական բանահյուսություն» թեմայով 1941-ին (գիտական դեկավար՝ Մ. Աբեղյան)։ Մոտ 30 տարի անց՝ 1970-ին, պաշտպանել է դոկտորական՝ «Հայ ժողովրդական ավանդությունները» ատենախոսությունը։ Ակտիվորեն մասնակցել է գիտական նոր կադրերի պատրաստմանը, երկար տարիներ եղել է Գիտությունների ակադեմիայի երկու ինստիտուտների Մ. Աբեղյանի անվան գրականության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտների, ինչպես նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդների անդամ, բացի այդ՝ Գրականության ինստիտուտի դոկտորական աստիճաններ շնորհող մասնագիտացված գիտխորհրդի նախագահի տեղակալ։ Մինչև իր կյանքի վերջը վարել է

«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոնը (1965–1983 թթ.):

Ա. Ղանալանյանը բանահյուսության ուսումնասիրությունները զբաղվել է ոչ որպես մշակութաբան կամ առավել ևս՝ ազգագրագետ, այլ ավելի շատ բանահյուսությունը դիտարկել է իբրև «անգիր գրականություն», ուստի նրա հետազոտությունները կարելի է դիտարկել գրականագիտության և բանագիտության խաչման դաշտում: Սրանով են պայմանավորված նաև անվանի գիտնականի գործունեության հիմնական չորս ոլորտները, որոնք առանձնացրել է նրա վաստակը լավագույնս արժևորած բանագետ, անկախ Հայաստանում բանագիտական դպրոցի հիմնադիր Սարգիս Հարությունյանը [Ս. Հարությունյան. Ակադեմիկոս Արամ Ղանալանյան (ծննդյան 100-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 2009, № 1, էջ 281]: Բանագետի դասակարգումները մի փոքր վերաձևակերպելով՝ Ա. Ղանալանյանի աշխատանքների հիմնական ուղղությունները կարելի է ներկայացնել հետևյալ չորս կետերի ներքո. ա) Հայ բանահյուսության առանձին ժանրերի համահավաք բնագրերի պատրաստում և հետազոտում, բ) Հայ գրականություն – Հայ բանահյուսություն փոխառնչություններ, գ) բանահավաքչական նյութի հրապարակում և Հայ բանահյուսության հանրահռչակում, դ) Հայագիտության ու Հայ բանագիտության առանձին ներկայացուցիչների և իրողությունների ուսումնասիրում:

Բանահյուսական բնագրերի հետազոտման ընթացքում Ա. Ղանալանյանը գործ է ունեցել նախ՝ հեքիաթների, ապա՝ աշխատանքային երգերի, առածասացվածքների և վերջապես՝ ավանդազրույցների ու երգիծազրույցների հետ: Ընդ որում բացի հեքիաթներից՝ մյուս բոլոր ժանրերի դեպքում նա եղել է դրանց առաջին համապարփակ ուսումնասիրողը Հայ բանագիտության պատմության մեջ: Իր առաջին աշխատավայրում՝ Հայաստանի նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտում, Կ. Մելիք-Օհանջանյանի խորհրդով ու ցուցումներով, նա ձեռնամուխ է եղել բանահյուսական արխիվում պահվող շուրջ 1000 ժողովրդական հեքիաթների սյուժետային համաբարբառի կազմմանը (1930-ական թվականների սկիզբ). այդ հեքիաթներն արևմտահայ գաղթականներից գրի էր առել ազգագրագետ Երվանդ Լալայանի արչավախումբը 1915–1916 թթ.:

Այնուհետև Ա. Ղանալանյանը կազմել և խմբագրել է «Հայ շինականի աշխատանքի երգերը» ժողովածուն (1937 թ., 267 էջ), որն աչքի է ընկնում բնագրագիտական կուռ սկզբունքների վրա հիմնված կառուցվածքով: Ապա՝ 1951 թ., լույս է տեսել Ա. Ղանալանյանի «Հայկական առածանի»՝ հայկական առած-ասացվածքների գիտական համահավաքը (198 էջ), որը Հայ բանաձևային բանահյուսության առանձին ժանրին վերաբերող առաջին գիտական ժողովածուն էր: Այս գրքի լրամշակված տարբերակը հրատարակվել է 1960 թ. «Առածանի» վերնագրով, որում «Լրացում» բաժնի մեջ ընդգրկվել են շուրջ 600 նոր առած-ասացվածքներ:

Ա. Ղանալանյանի բանագիտական գործունեության պսակը, իրավամբ, համարվում է 1969 թ. հրատարակված «Ավանդապատում» ժողովածուն (ԾՂ+530 էջ), որը Հայ իրականության մեջ Հայոց հին ու նոր ավանդազրույցների առաջին ամբողջական ժողովածուն է: Թեև նա այս աշխատության մեջ գործածում է ժանրի՝ այլևս հնացած համարվող «ավանդություն» եզրույթը, բայց հստակ

սահմանում է «ավանդական զրույց» հասկացությունը, առանձնացնում դրա հիմնական բովանդակային տեսակները՝ բացատրական, ստուգաբանական և վարքաբանական:

Կյանքի վերջում Ա. Ղանալանյանն աշխատել է հայ ժողովրդական երգիծական մանրապատումների գիտական համահավաքի կազմման ուղղությամբ, սակայն ծրագրվող կոթողային աշխատությունները՝ «Երգիծապատում»-ն ու «Մանրապատում»-ը, այդպես էլ մնում են անավարտ ու անտիպ՝ հեղինակի վերահաս մահվան պատճառով:

Հայ գրականություն — հայ բանահյուսություն փոխառնչություններ գերլայնածավալ թեմայի շրջանակում Ա. Ղանալանյանի նպատակն էր՝ գրել ընդհանրացնող համապարփակ մի աշխատություն՝ «XIX դարի հայ գրականությունն ու ժողովրդական բանահյուսությունը» խորագրով: Թեև հսկայական այս նախագիծը մնում է անավարտ, սակայն հեղինակին հաջողվել է առանձին հայ գրողների վերաբերյալ գրքույկներ, մենագրություններ, ժողովածուներում գլուխներ և առանձին հոդվածներ հրատարակել, ինչպես «Պոռչյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1938 թ., 94 էջ), «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը» (1941 թ., 141 էջ), «Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1955 թ., 104 էջ), «Մ. Նալբանդյանը և ժողովրդական բանահյուսությունը» («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 71–80), «Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները» (1963 թ., 82 էջ), «Թումանյանը և ժողովրդական բանահյուսությունը» (Թումանյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 1, 1964 թ., էջ 26–45):

Բանահավաքչական նյութի հրապարակման և հայ բանահյուսության հանրահռչակման շրջանակում Ա. Ղանալանյանը հայ բանահյուսության տարբեր ժանրերի, ստեղծագործությունների, երևույթների վերաբերյալ ներկայացրել է բնագրային և գիտահանրամատչելի մի շարք հրապարակումներ, որոնք լույս են տեսել թե՛ ընդհանուր ժողովածուների կազմում, թե՛ իբրև առանձին հրատարակություններ: Այս աշխատանքը հիմնականում վերաբերում է «Սասնա ծռեր» էպոսին և հայ ժողովրդական հեքիաթներին: Այսպես, «Սասնա ծռեր»-ի հին ու նոր պատումների բազմահատորյակի առաջին հատորներում (1936 թ. և 1951 թ.), Մ. Աբեղյանի խմբագրությամբ և Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ, ի թիվս այլ բանահավաքների գրառած մի քանի տասնյակ այլ պատումների տեղ են գտել Ա. Ղանալանյանի գրառած երկու կարճ պատումները, որոնք նա արձանագրել էր 1933 թ.՝ ծնունդով Մոկսից (Ապարկերտ) կին վիպասաց Փառիկից և 1936 թ.՝ ծնունդով Վասպուրականից (Աղբակ) վիպասաց Վարդան Վարդանյանից: 1939 թ. Խորհրդային Հայաստանում մեծ շուքով նշվում էր «Սասնա ծռեր» դիցավեպի 1000-ամյա հոբելյանը, որի առթիվ այդ տարի լույս տեսավ էպոսի համահավաք բնագիրը՝ հյուսված Մ. Աբեղյանի, Գ. Աբովի և Ա. Ղանալանյանի կողմից՝ մի քանի տասնյակ պատումների հիման վրա: Վերջինս, մասնավորապես, հյուսել է երրորդ ճյուղի «Դավիթ և Խանդավազ» մասը և Փոքր Մհերի ճյուղը՝ ամբողջությամբ. այս աշխատանքի համար բանագետը պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով: Այդ նույն շրջանում Ա. Ղանալանյանը հրատարակել է նաև «Սասունցի Դավիթ. հայ ժողովրդական վեպ» դասախո-

սուլթյունը (1939 թ., 44 էջ) և ««Սասունցի Դավիթ»-ի պատմիչների կյանքն ու գործունեությունը» հոդվածը («Խորհրդային գրականություն», 1939 թ., № 8–9, էջ 39–56):

Մոտ մեկ տասնամյակ անց՝ 1950 թ., նա կազմել և հրատարակել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» խորագրով ծավալուն ընտրանին, որի ընդարձակ առաջաբանում (էջ VII–XXI) նաև քննարկում է հրաշապատում և իրապատում հեքիաթների յուրահատկությունները: Ի դեպ, սույն ժողովածուն ժամանակագրորեն առաջինն էր Խորհրդային Հայաստանում հրատարակված ժողովրդական հեքիաթների ժողովածուներից:

Ա. Ղանալանյանը, մանավանդ իր գիտական գործունեության առաջին տասնամյակներին, պարտադրված գաղափարախոսական ուղղակի և անուղղակի ճնշմամբ, գրել է նաև քարոզչական բնույթի գիտահանրամատչելի գրքույկներ, ինչպես՝ «Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից» (1938 թ., XXIII)+126 էջ), «Լեհինը ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության մեջ» («Տեղեկագիր», 1961, № 7, էջ 41–54), «Հայ ժողովրդի հերոսապատումները» (1942 թ., 88 էջ), «Թշնամու կերպարը հայկական հին բանահյուսության մեջ» (1943 թ., 46 էջ), «Հայ քաջորդիները» (1943 թ., 30 էջ): Վերջին երեք աշխատանքները գրվել էին երկրորդ աշխարհամարտի օրերին և նպատակ ունեին բարձրացնելու ժողովրդի հայրենասիրական ոգին:

Հայագիտության ու հայ բանագիտության առանձին ներկայացուցիչների և իրողությունների ուսումնասիրման ծիրում Ա. Ղանալանյանի ձեռնարկած ամենամասշտաբային գործը «Հայ ժողովրդական բանահյուսություն» ուսումնական դասընթացի բազմահատորյակի շարագրումն է, որը նա սկսել է պատերազմից անմիջապես հետո՝ 1945 թ., Հայաստանի հեռակա մանկավարժական ինստիտուտի հանձնարարությամբ: Ծրագրված 11 պրակից, սակայն, հրատարակվում են միայն 4-ը [«Հայ բանագիտության պատմություն», պր. 1 (1945 թ., 50 էջ), «Ժողովրդական երգեր», պր. 8 (1945 թ., 57 էջ), «Առածներ և ասացվածքներ», պր. 9 (1946 թ., 36 էջ), «Սովետահայ բանահյուսություն», պր. 11 (1946 թ., 34 էջ)]:

Ա. Ղանալանյանն առանձին աշխատանքներով անդրադարձել է նաև հայրենի հայագետների ու բանագետների գործունեությանը, ընդ որում երկու մեծերի՝ Գարեգին Սրվանձտյանցի և Մանուկ Աբեղյանի վերաբերյալ ամբողջությամբ ուսումնասիրել է նրանց կյանքն ու գործը: Նրանցից առաջինի մասին հատկապես մանրամասնորեն գրել է «Հայ նոր գրականության պատմություն» բազմահատորյակի 3-րդ հատորում (1964 թ., էջ 555–588) և Գ. Սրվանձտյանցի «Երկերի» 1-ին հատորի առաջաբանում (1978 թ., էջ 7–26), երկրորդի մասին՝ «Սովետական գրականություն» ամսագրում (1955 թ., № 12, էջ 126–142) և Մ. Աբեղյանի «Երկերի» 1-ին հատորի սկզբում (1966 թ., էջ 7–27), իսկ մյուսների առնչությամբ (Ն. Մառ, Հ. Օրբելի, Կոմիտաս, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան) հընթացս գրել է հայ բանահյուսության նմուշներ գրառելու, հրատարակելու և արժևորելու առիթով: Ի վերջո, նշված բոլոր անդրադարձներն ամփոփվել են Ա. Ղանալանյանի ետմահու հրատարակված գրքում՝ «Դրվագներ հայ բանագիտության պատմության» (1985 թ., 293 էջ):

Ա. Ղանալանյանի գիտական վաստակը և մարդկային որակները բարձր են գնահատել նրա գործընկերներն ու աշակերտները (Ս. Շախյան, Է. Պիվադյան,

Ս. Հարությունյան, Ա. Սահակյան և այլք), որոնք անդրադարձել են նրա գործունեությանն իր կյանքի օրոք կամ հետո: «Արամ Ղանալանյանն էլ իր ամբողջ կյանքում ատեց մեծարման հանդեսներն ու գովաբանական ճառերը, հավակնոտ ինքնահայտարարումն ու գրական քուրմի կեցվածքը: «Գրականության համեստ մշակ», – այս է ամենահարմար բնութագրականը, որ կարելի է տալ նրան» , – գրել է Ս. Շտիկյանը (Ս. Շտիկյան. նշվ. հոդվ., էջ 4):

Արամ Տիգրանի Ղանալանյանը մահացել է 1983 թ. հունիսի 9-ին երեւանում իր գիտական աշխատանքներով արժանավոր և մնայուն տեղ գրավելով հայ մեծանուն բանագետների գերդաստանում:

ՏՈՐՔ ԴԱԼԱՅԱՆ

Բ. Գ. Թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն, բանագիտության բաժնի վարիչ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-կովկասյան և հայ-իրանական բանահյուսական և լեզվամշակութաբանական առնչություններ: Համահեղինակ է 1 գրքի և հեղինակ ավելի քան 100 հոդվածի: ORCID:0000-0002-8686-5341. torkdal@yahoo.com